



**ՔՐԻՍՏՈՍ ԾՆԱԲ ԵՒ ՅԱՅՏՆԵՅԱԲ,
ՕՐՀՆԵԱԼ Է ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆՆ
ՔՐԻՍՏՈՍԻ,
ՁԵԶԻ ԵՒ ՄԵԶԻ ՄԵԾ ԱՄԵՏԻՍ**

Շատ յոգևեցուցիչ ճամբորդութենէ մը ետք, երբ անոնք Բեթղեհէմ հասան, գիշերելու տեղ չկրցան գտնել եւ ստիպուեցան քարայրի մը մէջ ապաստանիլ, կենդանիներուն հետ:

Աստուծոյ որդին՝ Յիսուս հոն ծնաւ: Մարիամ զինք մտորի մը մէջ դրաւ: Գիշերուան մութին՝ հովիւները, երբ իրենց ոչխարներուն հետ էին, յանկարծ փայլուն լոյս մը տեսան: Հրեշտակ մը երեւցաւ ու ըսաւ անոնց.

- Մի՛ վախնաք: Ձեզի աւետիս մը պիտի տամ, այս գիշեր մանուկ մը ծնաւ Բեթղեհէմի մէջ: Ան Աստուծոյ որդին է, գաղթի եւ գո՛ւթ գայն: Չինք պիտի տեսնե՞ք՝ խանձարուրով փաթթուած եւ մտորի մը մէջ դրուած:

Ու երկինքէն խումբ մը հրեշտակներ երգեցին «*բարձունքներուն մէջ Աստուծոյ փառք, խաղաղութիւն երկրի վրայ եւ մարդոց միջեւ հաճութիւն*»:

Հովիւները հրեշտակին խօսքը մտիկ ընելով, գացին ու գտան Յիսուս Մանուկը: Ապա ժողովուրդին աւետեցին Քրիստոսի ծնունդը:

Արեւելքէն իմաստուն մոզերն ալ, երբ տեսան փայլուն աստղը երկինքին մէջ, գիտցան, որ ժողովուրդին համար նոր թագաւոր մը ծնած էր: Անոնք հետեւելով աստղին. Բեթղեհէմ, հասան, մտորը գտան, Յիսուս մանուկը տեսան ու Անոր նուիրեցին ոսկի, կընդրուկ եւ զմուշ:

Յիսուս այսպէս ծնաւ, որպէսզի հոգեւոր լոյս սփռէ եւ փրկութիւն բերէ մարդոց:

Աստուած խոստացած էր Փրկիչ մը զրկել իր ժողովուրդին: Ո՛չ ոք գիտեր թէ երբ պիտի գար Ան, բայց շատեր անհամբեր կը սպասէին:

Աստուած Գաբրիէլ հրեշտակը զըրկեց Նազարէթ քաղաքը, որ Մարիամին աւետէ, թէ Աստուած զինք ընտրած է յատուկ նպատակով: Ան գաւակ մը պիտի ունենար եւ անունը Յիսուս պիտի դնէր:

Այդ գաւակը Աստուծոյ որդին պիտի ըլլար: Մարիամ ամուսնացաւ Յովսէփին հետ:

Այդ օրերուն Կայսրը հրամայեց որ ամեն մարդ իր ծննդավայրը երթայ մարդահամար կատարելու համար: Ստիպուած՝ Մարիամ եւ Յովսէփ Բեթղեհէմ գացին իրենց անունը արձանագրելու համար մարդահամարի ցանկին վրայ:



ԹԻՒՔ ՊԱՏՐԱՍՏԵՑ՝ ՈՒԹԱՆ ԿԱՐԵԱՆ-ՏԻՔՄԻԲԵՆՆ
ՆԿԱՐԱԶԱՐՈՒՅՑ՝ ՈՒՅՅԻ ՔԵՇՈՒՅԵՆՆ

ՁԱԳՈՒԿՆԵՐՍ ԿՐ ԳՐԵՆ

Վերջապես հասաւ տարուան վերջին ամիսը: Մեծ ուրախութեամբ պիտի դիմաւորենք Նոր Տարին ու մեծ հաճոյքով զարդարենք մեր տօնածառը գոյնզգոյն լոյսերով եւ խաղալիքներով: Ծառին տակ պիտի դնենք Յիսուս մանուկին քարայրը եւ պիտի աղօթենք, որ խաղաղութիւն եւ սէր բաշխէ աշխարհին, խելք ու շնորհք տայ ինծի եւ եղբօրս, իսկ իմ սիրելի մայրիկիս եւ հայրիկիս առողջութիւն եւ երկար կեանք:

Յիշեցի՛, չմոռնամ աղօթքիս մէջ աշխարհի բոլոր մանուկները, որոնք զրկուած են Նոր տարուան ուրախութիւնը ապրելէն:

Կը խնդրեմ, Կաղանդ Պապա, տոպրակդ նուերնրով լեցնելով. ուրախացո՛ւր ինծի եւ աշխարհի բոլոր մանուկներուն:

Պերճ Ասատուր
Բ. կարգ
Ազգ. Միացեալ Վարժարան (Դամասկոս)

Կաղանդ է: Տան մթնոլորտը զուարթ է: Մշտադաւար եղէիկը, գոյնզգոյն լոյսերով, ժապաւեններով եւ պսպղուն աստղերով զարդարուած է:

Ծառին տակ խորհրդաւոր կերպով գետնուած է Յիսուս մանուկին ծնունդը աւետոյ քարայրը՝ իր փայլուն աստղով, որ խաղաղութիւն եւ սէր կը տարածէ աշխարհին: Ի տես այս խորհրդաւոր տեսարանին, յանկարծ մտածումներս կը սաւառնին ու կը յիշեմ, թէ որքա՛ն մանուկներ կան, որոնք զրկուած են իրենց ընտանիքէն եւ չեն կրնար ապրիլ Նոր Տարուան ուրախութիւնը:

Ուստի, կը խնդրեմ Կաղանդ Պապայէն, իր խոշոր նուերներու տոպրակը լեցուն բերել ու պարգէներ բաշխել աշխարհի բոլոր անտէր մանուկներուն:

Սարօ Ասատուր
2. կարգ
Ազգ. Միացեալ Վարժարան (Դամասկոս)

Սիրելի՛ Կաղանդ Պապա,
Կը մաղթեմ քեզի երկար կեանք եւ բարի Ամա-
նոր:

Մի՛ ուշանար, այս տարի եւս մի՛ մոռնար բո-
լոր փոքրիկներուն նուերները:

Քեզի շատ կը սիրեմ:

Գեորգ Թէմիզճեան
Ե. կարգ

Ազգ. Միացեալ Վարժարան (Դամասկոս)

Սիրելի՛ Կաղանդ Պապա, ուրախ եմ որ նորէն կը մօտենանք Նոր Տարուան ու կրկին կրնամ ձեզի նամակ գրել: Կը փափաքիմ որ աշխարհի փոքրիկները ուրախ ըլլան: Ես կ'ուզեմ որ ամէն պզտիկ ու մեծ նուեր ստանայ, մանաւանդ կարիքաւոր ընտանիքները, ու ամէն տարուան պէս կը խնդրեմ խաղաղութիւն եւ ուրախութիւն մեր սիրելի Սուրբոյ: Կը մաղթեմ ու կ'աղօթեմ որ Նոր տարին ըլլայ խաղաղ եւ առողջ տարի բոլորին:

Նարօտ Կարապետեան
Դ. կարգ
Ազգ. Միացեալ Վարժարան
(Դամասկոս)

Սիրելի՛ Կաղանդ Պապա,
Շատ կարօտցած եմ քեզի: Գիտե՞ս Կաղանդ Պապիկ, ես տակաւին քեզի տուած խոստումս կը յարգեմ ու դասերս կը ջանամ կատարեալ պատրաստել, որպէսզի ըլլամ տիպար, օրինակելի հայ աշակերտուի մը ու պարծանք բերեմ ազգիս ու ընտանիքիս:

Կաղանդ Պապիկ, մեր տունը զարդարեցինք ու անհամբերութեամբ կը սպասենք զալը, մեր դուռը քեզի համար միշտ բաց է: Ի՛նչ որ կ'ուզես՝ կրնաս բերել ինծի, բայց քեզմէ երկու խնդրանք ունիմ: Կը փափաքիմ, որ իրականացնես զանոնք: Առաջինը՝ հայրենիքիս խաղաղութիւն, հայ զինուորներուն ուժ եւ ապահովութիւն, իսկ երկրորդը՝ օտար ափերու մէջ գտնուող հարազատներուս եւ դասընկերներուս առողջ, բարեյաջող եւ երջանկաբեր տարի մը թող ըլլայ:

Սիրով՝
Ալինա Գրիգորեան
Դ. կարգ
Ազգ. Միացեալ Վարժարան
(Հալէպ)



ԾՆՈՒՆԴԻ ԱՍՏՂԸ

Երկինքի աստղերն հատ մը կար, որ ամենն գեղեցիկն ու փայլունն էր: Բոլոր աստղերը հիացումով կը նայէին անոր, իսկ աստղն ալ հպարտ ու գիտակից էր իր անմրցելի գեղեցկութեան:

Օր մը, խումբ մը հրեշտակներ կու գան եւ գեղեցիկ աստղին կը տեղեկացնեն, որ Աստուած զինք ընտրած է կարելուր առաքելութեան մը համար:

Աստղը մեծ ուրախութեամբ ու հպարտութեամբ կը հետեւի հրեշտակներուն, որպէսզի զինք առաջնորդեն այն վայրը, ուր ինք պիտի լուսաւորէր իր փայլքով: Օրեր ետք հրեշտակները կանգ կ'առնեն՝ աստղին ըսելով, թէ հասած են որոշեալ վայրը: Աստղը զարմացած կը նայի շուրջ բոլորը եւ փոխանակ ըստ իր ակնկալութեան, շքեղ պալատներ տեսնելու կը տեսնէ աղքատ եւ լքուած գոմ մը, ուր տեղի պիտի ունենար կարելուր պատահար մը: Աստղը բարկացած կ'ըսէ.

- Ես չեմ կրնար իմ փայլքս ու գեղեցկութիւնս վատնել նման տեղի մը վրայ:

Հակառակ որ հրեշտակները կը փորձեն հանդարտեցնել զինք, սակայն աստղին զայրոյթը հետզհետէ կ'աւելնայ այն աստիճան, որ կը սկսի այրիլ ինքզինք սպառելով:

Մեծ պատահարին քանի մը օր մնացած էր եւ աստղ մը չկար լուսաւորելու զայն, ուստի հրեշտակները տագնապած կ'երթան Աստուծոյ քով եւ անոր կը տեղեկացնեն պարագան: Աստուած քիչ մը մտածելէ ետք կ'ըսէ.

- Փնտռեցէ՛ք ամենն փոքր, համեստ... բայց զուարթ աստղը եւ հոս բերէ՛ք:

Հրեշտակները կ'աճապարեն կատարելու Աստուծոյ հրահանգը, կ'երթան եւ կը գտնեն ամենն փոքրիկ-զուարթ աստղը եւ զայն կը բերեն Աստուծոյ քով: Աստուած կ'ըսէ.

- Ամենն գեղեցիկ ու կատարեալ աստղը ձախողեցաւ իր հպարտութեան պատճառով, ուստի մտածեցի ընտրել ամենն փոքրիկ աստղը, որ լուսաւորէ պատմութեան կարելուրագոյն իրադարձութիւնը՝ Յիսուս մանուկի ծնունդը Բեթղեհեմի մէջ:

Փոքրիկ աստղը կ'ուրախանայ, սակայն կը մտած է, թէ իր լոյսը բաւարար պիտի չըլլար նման առիթի մը համար: Ուստի կը հրաւիրէ երկինքի բոլոր աստղերը, որպէսզի իրեն հետ մասնակցին այդ կարելուր իրադարձութեան: Բոլոր աստղերը կ'ընդառաջեն փոքրիկ աստղին հրաւերին եւ բոլորը միասնաբար կը կազմեն Ծնունդի ամենն գեղեցիկ աստղը:

Աստուած շատ գոհ կը մնայ փոքրիկ աստղին համեստութենէն եւ անոր կու տայ փափաքներ իրականացնելու շնորհը:

Այս պատմութիւնը ցոյց կու տայ, որ հպարտութիւնը եւ ինքնահաւանութիւնը ժխտական անդրադարձ կ'ունենան անձին վրայ:



ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ ԵՒ ՅԻՍՈՒՄԻ ԱՍՏՈՒԱԾԱՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ ՈՒ ՄԿՐՏՈՒԹԵԱՆ ՏՕՆԵՐԸ

Ամեն տարի Յունուար 6-ին Հայ Առաքելական Եկեղեցին կը նշէ երկու տօներ՝ Քրիստոսի ծնունդը, եւ մկրտութիւնը կամ Աստուածայայտնութիւնը, մինչդէռ ուրիշ եկեղեցիներ այս երկու տօները կը նշեն առանձին եւ տարբեր օրեր:

Ըստ հնագոյն արձանագրութիւններու Սուրբ Ծնունդը առաջին անգամ տօնուեցաւ 336 թուականին Դեկտեմբեր 25-ին, իսկ առաջին Աստուածայայտնութեան տօնը տեղի ունեցաւ Յունուար 6, 361 թուականին: 451 թուականին, 4-րդ տիեզերական ժողովին, Յիսուսի ծննդեան եւ մկրտութեան տօներու թուականներու յըստակացման վերաբերեալ եկեղեցիներու միջեւ տարակարծութիւն ծագեցաւ: Արեւելքի եւ Արեւմուտքի քրիստոնէայ եկեղեցիները որոշեցին Սուրբ Ծնունդը եւ Աստուածայայտնութեան տօնը Դեկտեմբեր 25-ին, իսկ մկրտութեան տօնը Յունուար 6-ին տօնել: Հայ Առաքելական Եկեղեցին հաւատարիմ մնալով իր աւանդութեան ու հաւատքին, շարունակեց Սուրբ Ծննդեան, Աստուածայայտնութեան ու մկրտութեան տօները որպէս միասնական տօն, տօնախմբել Յունուար 6-ին: Տօնին նախորդող շաբաթը պահք է:

Յունուար 5-ին հայոց եկեղեցիներուն մէջ տեղ կ'ունենայ երեկոյեան ժամերգութիւն, որմէ ետք հաւատացեալները իրենց տուն կը տանին վառած մոմ եւ իրարու կը փոխանցեն Սուրբ Ծննդեան աւետիսը:

Պահքը կը բացուի մոմերու լոյսի տակ, ճոխ ու հարուստ նահապետական ճաշասեղանի շուրջ:



Հայոց Սուրբ Ծննդեան ճաշասեղանին վրայ կը գտնուի աւանդական զանազան ճաշեր, չոր միրգեր, չամիչ, նուշ, թուզ, սիսեռով, չոր բանջարեղէնով, ձաւարով, վարսակով ճաշեր, ձկնային ճաշատեսակներ, հարիսա, քէշկէք, թօփիկ, գինի կամ օղի, ապուխտ, եղինձ, փախլաւայ եւ այլ խմորեղէններ: Անպակաս կ'ըլլար նաեւ «Ծննդեան ապուր»ը (չոր բանջարեղէնով ապուր մը) որ կը կոչուի նաեւ «Մարիամայ ճաշ»:

Հայկական որոշ շրջաններու մէջ Սուրբ Ծննդեան տօնին առիթով գառ, ուլիկ կամ հորթ մը կը խնամէին, գոր կը մորթէին տօնի նախօրեակին:

Ս. Ծննդեան ընթրիքէն առաջ խունկ կը վառէին, չոր ոգիներուն եւ սատանայի ազդեցութիւնը չեզոքացնելու համար:

Հայ կեանքի մէջ աւանդութիւն էր նաեւ, Յիսուսի Ծնունդը աւետելու համար, շարականներ երգելով տունէ տուն շրջիլը:

Հայ եկեղեցւոյ մէջ Յունուար 6-ին Ս. Պատարագ կը մատուցուի եւ Ջրօրհնէքի արարողութիւն կը կատարուի, որ կը խորհրդանշէ Քրիստոսի մկրտութիւնը Յորդանան գետի մէջ: Սուրբ խաչով ու Միւռնով կ'օրհնուի ջուրը եւ հաւատացեալներուն կը բաժնուի, որոնք օրհնուած ու միւռնուած հրաշագործ ջուրը տուն կը տանին որպէսզի ոեւէ մէկ պատճառով եկեղեցի չէկած կամ հիւանդ անձն ալ խմէ այդ ջուրէն, եւ բժշկութիւն խնդրէ Աստուծմէ: